

Ch. Umphyndjuk

Utpolushtip

891.99

UF-22

6 NOV 2017



# ՄԵՐՃԻԱԾՆԵՐԸ

Վիպակ

(ՊՈԼՍՈՑ ԿԵԱՆՔԻՑ)

4944

Տպագրութիւն Օսմ. Թուրքական լեկերութեան

Կ. Պ Օ Լ Ի Ս

# ՄԵՐԺԻԱԾՆԵՐԸ

I.

Թիւրքիան վերածնւում էր:

Երլարդի կարմիր յանցագործը վերջնականապէս տապալւած էր և նորածին սահմանադրութիւնը վաղահաս մահից ազատւած։ Պօլսեցիների ուրախութեանը սահման չըկար։

Այդ տարւայ գարունը՝ Պօլսոյ քնքոյշ սեռի պէս՝ արադ բացւեց, արագ էլ թառամեց։ Քաղաքի շրջակայքի դալարը անձրեւի պակասութեան պատճառով գեղնել՝ չորացել էր։ Սաստիկ տաք էր անում։ Քաղաքացիների մեծամասնութիւնն արդէն դնացել էր ամսուանոցներ, իսկ քաղաքում մնացողներին վիճակւած էր բաւականանալ այդ տեղի խղճուկ այգիներում զբօսնելով։

Մի երեկոյ մեծ բազմութիւն կար. Պտինանի (\*) մէջ։ Իտալական երաժշտախումբը ոգեսորւած նւագում էր գեղեցիկ կտորներ։ Հարիւրաւոր պճնաղարդ տիկնայր. պարոնների

[\*] Պօլսոյ եւրոպական թաղում փոքրիկ ծառանոց, որի մէջ է ամառնային թատրոնը։



6315-70

հետ սեղանների շուրջը նստած, ուտում՝ խը-  
մում էին և ժամանակ անցնում։ իսկ նրանց  
մօտ՝ ծառերի տակ՝ բազմաթիւ երեխաներ՝  
վազվելով, խաղում էին և ուրախանում։

Որովհետեւ Պօլսոյ այդիների մուտքը վճա-  
րով է, ուստի՝ բնականաբար՝ դրամն այդտեղ  
էլ եկել էր որոշակի դերով բաժանել զրու-  
նող քաղաքացիներին դասակարգերի։ Աւ-  
նելորները և նրանք, որ կամննում են ունե-  
ւոր երեալ, մտել էին Պտի-Շանի մէջ և  
բաժանել այն մեծ բազմութիւնից, որը՝ ինա-  
յելով մուտքի համար իր «զրուշը»՝ նստել  
էր դուրսը, Պտի-Շանի հանդէպ՝ փողոցի  
միւս կողմից, ուր շարւած են մի կարգ նշա-  
նաւոր հիւրանոցներ, որոնք հպարտութեամբ  
նայում են դէմի Ասկեղիւրի և մասամբ Մար-  
մարայի ու Բօսֆորի ջրերը։

Սյոյ բազմատեսակ, բազմակրօն և բազ-  
մալեզու ամբոխը նստած էր նոյն տեղ դըմն-  
ող դարեջրատաների ու սրճարանների տունի։  
Աւելի քան երեք հարիւր մետր երկարու-  
թեան մայթի վրայ չը տեղաւորելով, այդ-  
ամբոխը նստել էր ուղղակի փողոցի մէջ՝  
մինչեւ տրամվայի դիմք։ Փողոցը դար-  
ձել էր կարմիր ֆէսերի մի ընդարձակ արտ,  
որի մէջ տեղ-տեղ երևում էին կանանց ծաղ-  
կազարդ գլւարկները։ Եւ այդ տեղ, ուր օր-  
ւայ ընթացքում սովորաբար միշտ կանդնում

են հարիւրաւոր կառքեր և թողնում ձիերի  
աղբի ու մէզի գարշահսաւթիւնը, այժմ  
էջէնտիներն էին նստած՝ ուտում, խմում,  
նարդիլէ ծխում, պօլիտիկայից խօսում, կամ  
տաքացած վիճաբանում որ և է առետրա-  
կան ձեռնազկի վերաբերեալ։ Իսկ նրանց  
անշուր սեղանների տակ վիստում էին փողո-  
ցային շներն իրանց լակունելով և աղաճու-  
թեամբ կլանում սեղաններից ընկած փշան-  
քները։

Սրեդակն արդէն մայր էր մաել։ Ասկեզ-  
չիւրի արևմտեան ափի վրայ, ուր դանւում  
է «Ստամբուլ» կոչւած թիւրբական քաղա-  
քամասը, մի սրանցելի վերջալըսից դեռ լու-  
սաւորւած էին հյակապ միկիթների գմբէթ-  
նելը, աշտարակների և նոճների կատարները,  
մինչդեռ միւս շինութիւնների ընդհանուր դը-  
ժագրութիւնը արդէն աննշմարելի է դառ-  
նում և մասամբ կրկնում երեկոյեան մշտի  
մէջ։ Բառուագոյն երկինքն իր սովետիայլ ամ-  
պերով միանգ ամայն աննման էր ու հրապու-  
րիչ։

Կամաց-կամաց մթնեց և երկնքի վրա հան-  
դիսացան լուսինն ու ասաղերը։ Միաժա-  
մանակ վառեցին աների ծրագնելը ու փո-  
ղոցների լապտերները։ Բայց այս օրւայ ծրագ-  
ներին ու լապտերներին թիւ ու համար չը  
կար։ և շարունակաբար ամեն կողմից վառ-

ւում ու վառւում էին, մինչև որ ամբողջ քաղաքն իր արուարձաններով թաղւեց մի շը տեսնած լոյսի մէջ։ Ու միտքեան միջից երեան երան Պօլսոյ նշանաւոր զինութիւնները դոյնդոյն լսպտերներով և ազգային դրօշակներով զարդարւած։

Սքանչելի էր ծովային տեսարանը, մասնաւանդ Բօսֆօրը։ Այդ նեղուցը, որ՝ օձապտոյտ գետի պէս տարածւած՝ միացնումէ Սև-Ծովը Մարմարայի հետ և բաժանում Եւրոպան Ասիայից, իր խաղաղ ջրի հայելու մէջ՝ լուսնի և բենգալեան կրակների լոյսի տակ ցոլացնում։ Էր իր ծառազարդ և համայնչելով՝ իրենց ամառնային դեղեցիկ ասպարանիքներով, հնագարեան կիսաւերպարիսպներով ու բուրդերով, արքայական շքեղ պալատներով, վեհապահն մղկիթներով ու աշտարակներով, մեղսորէն օրորելով իր ջրի մակերեսոյթի վրայ բազմաթիւ լսպտերազարդ շոգենաւեր, ռազմանաւեր, առագաստանաւեր և անթիւ դողարիկ մակոյիներ, որոնք՝ անընդհատ շարժման մէջ լինելով, մի առանձին կենդանութիւն էին տւել այդ շացուցիչ և միանդամայն երազական պատկերին։ . .

Շուտով լսեցին արհեստական կրակների պայմաններ, արագոցներ, թնդանօթների բամբիւններ և ժողովորդի մէջ

ընկաւ մի անպատմելի իրարանցում։ Մարդիկ խելակորոյս վազվում էին գէս ու գէն՝ տեսարանները գիտելու համար, ուր աւելի հրապուրիչ էր ու չքեղ։ Կառքերի ու տրամվայի արտասովոր արիաջան շարժումնեց, նաւերի անընդհատ սուլցներից, կեցցէներ աղաղակով մարդկանց ձայնից ու երաժշտութեան թնդիւնից միանդամայն շառաչում՝ որոտում էր բազմամարդ Պօլսը։

Հանդիսաւոր լուսավառութիւն էր այդ թիւքքիան տօնում էր իր նորածին սահմանադրութեան անդրանիկ տարեգարձը։

## II.

Անցան ժամեր։ Լուսավառութեան լսպտերները կամաց կամաց մարեցին։

Ժամի դեռ տասնեւելիը չը լրացած՝ փողոցները սկսեցին ամայանալ։ Տեղ տեղ միայն երեւուս էին ոստիկանները և երբեմնապէս պահապահն զինւորների խմբերը, որոնց հակողութեան տակ էր գտնուում մայրաքաղաքը։ Երկրի պատերազմական դըրութեան նորհիւ։

Պերայի Մեծ-Փողոցի վրայ, «Թոքաթշեան» հիւրանոցի ներքին սեղանատանը դեռևս մի քանի զոյտ մարդիկ կային նըստած։ Դուրսը՝ այդ հոյակապ շնութեան

մարմարեայ պատի խորշերից մէկում, պատուհանի տակ՝ նստած՝ քնած էին Մարկօն ու Քօջօն, երկու որբ եղբայրներ, մեծը ուժ տարեկան, կրտսերը վեց. դժմաբաց, բոկոտի և ցնցոտիներով փաթաթւած։

Քօջօն գլուխը դրած էր Մարկօն կիսամերկ կրծքի վրա, իսկ սա՝ առնելով իր փոքրիկ եղբօրը իր գրկի մէջ իր մարմնի տարութեամբ պաշապանում էր նրա թիւկունքը միտելուց և գլուխը խոնարհեցրած նրա ուսի վրայ, շրթունքները մօտեցրած նրա ականջին, կարծես օրոր էր ասում ու քնչաբար խնամումիր սիրելի եղբօրը . . .

Դրանք այն կոկն հասակումն էին, երբ երեխայական դէմքի ու մարմնի փափուկ շնուածքը՝ մօտենալով տղայականին, սկսում է աւելի ուժեղ և աւելի որոշ գծերով կազմակերպւել ու գեղեցկանալ Երկուսն էլ թէե նիհար, բայց վայելչակազմ տղաներ էին, Մարկօն շագանակադայն մաղերով իսկ Քօջօն ոսկեգոյն։

Մօտակայ լսողերի լոյսը ընկել էր նրանց վրայ և լուսաւորել նրանց գլուխներն ու կիսամերկ մարմնի մասերը Կարծես ճարտարապետը դիտմամբ դրել էր այդ շինութեան պատի խորչի մէջ այդպիսի մի արձան՝ այն միտքը արտայայտելու համար՝ թէ մեծառուների երշանկութեան պատերը

հաստատած են քշտոների ուսերի վրայ . . . Գիշերւայ կէսը մօտենում էր Մի ոստիկան յանկարծ մօտեցաւ քնած երեխաներին ու արմնայրեց նրանց։

— Այսաեղ քնելու աեղ չէ՛, ասեց նա, դուք տուն չունէք, մայր չունէք, հեռացէք այսաեղից . . .

— Զէ՛, փողիս էֆէնտի, պատասխանեց Մարկօն՝ շփոթւած նայելով ոստիկանին, մենք ծնողներ չունենք, մենք տուն չունենք, մենք որբե՞ր ենք . . .

— Բայց և այնպէս փողոցը որբանոց չէ՛ Շուտով հեռացէք այսաեղից, եթէ ո՛չ, ես կը տանիմ ձեղ և կը յանձնեմ ոստիկանատանիը։

Եղբայրները անխօս հեռացան և նորեց գարձան գէպի Պար-Շանի կողմը։

Քնաթաթախ աչքերով ու տարտամքայ-էրով նրանք առաջ էին գնում։

— Հիմայ ես ի՞նչ պիտի անեմ, Մարկօ, հարցրեց Քօջօն։ Լուցկիները չը ծախւեցին, ի՞նչ պիտի ասեմ մեր էֆէնտիին։ Նա ինձ ասեց՝ եթէ այսօր չը վճարենք ախոռի վարձը, մեղ դուրս պիտի ձգի։

— Նա արբած քնած կը լինի, պատասխանեց Մարկօն։ Մենք գաղտագողի կը մտնենք բակը, կը գիշերենք ախոռում, իսկ վազը կը տեսնենք թէ ի՞նչ ենք անելու։

Դեռ Պտի-Շան չը հասած մի դառիւ վայր փողոցով նրանք իջան գէպի ցած, ուղղւելով գէպի Ոսկեղջերի այն ափը, ուր գտնւում է «ՂամբմՓաշա» զօրանոցը՝ Երբոր նրանք անցնում էին տաճկական հնագարեան գերեզմանաստան միջով, մի խումբ նոճիների տակ, մի կանգուն գերեզմանաքարի մօտ՝ Քօչօն նկատեց մի կանացի ստեր ու կամացուկ հարցրեց եղբօրը.

— Ո՞վ է . . .

Մարկօն՝ առանց պատասխանելու՝ մեքենայաբար բունեց եղբօր ձեռքն ու արագ արագ քայլելով՝ անցան ստերի մօտով:

— Մարկօ . . . Քօչօ . . . գուք Է՞ք . . . դողդոշուն ձայնով կամացուկ կանչեց ըստ-երը՝ կանգնեցէք . . . մի՞ք վախենալ . . . ես եմ, ես . . . Շուշի՞կը . . .

— Շուշի՞կը . . . զարմացած բայսական-չեց Քօչօն ու եղբայրները կանգնեցին:

— Դո՞ւ ես, Շուշի՞կ, մօտենալով՝ հարց-ըեց Մարկօն: Ի՞նչ ես շնում այս տեղ՝ այս դիշերւայ ժամին:

— Մի՞ հարցնիր, Մարկօ, մի՞ հարցնիր... պատասխանեց Շուշիկը՝ դառնա-գին արտասւելով: Ես անբա՞խտ եմ. . . ան-բա՞խտ...

— Ի՞նչ է պատահել, Շուշի՞կ. . . ին-

չո՞ւ արտասւում ես. . . կարեկցաբար հարց-ըն տղաները և մէկը աջ կողմից՝ միւսը ձախ՝ բռնելով նրա ձեռքերը, սկսեցին քնիքշաբար փայփայել նրան ու հանգու-տայնել:

Բայց նա չը կարողացաւ պատասխանել ու սկսեց հեկեկալով լալ, լալ ինչպէս ձա-նըր հիսթէրիի ենթարկւած:

— Վերջապէս՝ ասա՞ ինձ, Շուշի՞կ, չեր-մագին սիրով շարունակեց Մարկօն, ասա՞ քոյրի՞կս, չե՞մ կարող մի բանով օդտակար լինել քեզ համար. . . Ես կը կատարեմ քո բոլոր համանները. . . Դու միշտ բարի ես եղել, միշտ ցաւակից ես եղել մեղ. . . Մենք չենք կարող մոռանալ այդ. . .

— Գիտեմ. . . հաւատում եմ. . . Մար-կօ չան, Քօչօ չան, հաւատում եմ ձեզ. . . պատասխանեց Շուշիկը: Ա՞խ. . . Երանի՛ թէ բոլոր մարդիկ ձեզ պէս մաքուր սիրա ու-նենային ու ձեզ պէս բարի լինեին. . . Այն ժամանակ ինձ նման որբուհիները այսպան դժբախտ չէին զգալ իրանց. . .

— Երեխ էֆէնտին ձեծեց քեզ, պար-զամտօրէն ընդհատեց նրան Քօչօն:

— Երանի՛ թէ ձեծեր. . . պատասխա-նեց աղջիկն ու շարունակեց աղիտղում լալ:

— Դէ գնա՞նք տուն. . . լանդբեց նրան Մարկօն: Գիշերւայ կէսն անցնում է, կա-

լող Ենք սաստիկանների հանգիպել  
— Ո՞հ... Մորիօ, միմնջալով խօսեց  
ազդիկը, այդ տան հետ այս օրից իմ հաշ  
շիւը վերջացրի... երբէք չեմ վերադառ  
նալ, չեմ մտնիլ այդ տունը... Ես գերազա  
տում եմ գերեզմանը, հասկանում ես, գե  
րեզմանը...

Քիչ լոելուց յետոյ՝ նա շարունակեց:  
— Տասը տարեկան աղջկի էի, երբ  
էֆենտին ու տիկինը որդեգրեցին ինձ՝ իբրև  
մի անտէր, անտիրական որբուհու... Ահա՛  
հինգ տարի է, որ աղբում եմ այդ տանը...  
Եյս ժամանակի ընթացքում՝ ինձպէս շատ  
որբուհիներ լրացնելուցին նոյն տան մէջ,  
ապրեցին ինձ հետ միասին և մէկը միւսի  
յետից անյայտացան... Երբ տիկնոջը  
հարցնում էին այս կամ այն որբուհու մասին,  
նա պատասխանում էր թէ ամուսնացրեց  
այս ինչ փաճառականի հետ և ուզարկեց  
մէկին Եղիպոսո, միւսին Ամերիկա կամ  
ուրիշ աեղեր... Մակայն այսօր, միայն այ  
սօր ես իմացայ այդ որբախնամ ընտանիքի  
բոլոր դաշտնիքները... Մեր տիկինը որբու  
հիներին պահում էր ու ծախում զանազան  
սրիկաների, ինչպէս և այս երեկոյ ինձ էր  
ուզում ծախսել...

— Ծախսել... զարմացած բացականչեց  
Մարկօն, չքարտողանալով պարզել այդ խօս  
քի իսկական իմաստուրը

— Այս՝ ծախսել... պատասխանեց Շուշ  
շիկը: Ես արդէն ծախսած էի, որովհետե  
ւս տեսայ, ինչպէս տիկինը մի բուռը ոսկի-  
ներ ստացաւ մի մարդկաց և հրամայեց ինձ,  
որ հաղնւեմ, պատրաստեմ ու այդ մարդի  
հետ գնամ լուսավառութիւնը տեսնելու և  
դրօմնելու... Բայց երբ կառը բերին, որ  
տանեն ինձ, ես գաղտադողի դուրս ելայ  
տանից ու փախայ... .

Նոճիների արանքալ լուսնի շողը լուսա-  
ւորել էր այդ նորատի աղջկայ վերին առ-  
ափճանի համակրելի դիմագիծը: Նրա գեղեց-  
իկ աչքերի մէջ, որնցից անլնդհատ թափ-  
ւում էին արտասուքի խոչը կաթիկները,  
պարզ երեւում էր իր երեխայական հոգոյ  
մաքրութիւնը, իսկ վարդագոյն շրթունք-  
ների վրա, որոնց միջից երբեմնապէս երեւ-  
ուում էին ձիւնի պէս սպիտակ ատամների  
գեղեցիկ շարքերը, պարզապէս տեսնելում էր  
այն մեծ խռովութիւնն ու այն փոթորիկը,  
որ այդ ըստպէին կատարուում էր իր ներքին  
աշխարհում: Շուշիկը՝ այդ նորատի հայուհին,  
որին կենսական անյաջող գէպքերը տարել  
էին կեանքի ճահիճը ձգելու, իսկապէս մի  
շոշան ծաղիկ էր, որի տերեներին՝ բացի  
արեգակի ճառագայթներից, ոչ միայն մար-  
դի կողիտ ձեռքը չէր դիպած, այլ և թի-  
թեռնիկի թեերը... Այդ կուսակտն մա-

քրութիւնն էր ու պատվի ճշմարիտ հասկա-  
ցողութիւնը, որ մի առանձին գեղեցկու-  
թիւն էին տալիս նրան և մի պատկառելի  
վեհութիւնն . . .

— Պօլսոյ մէջ աղդականներ կամ բարե-  
կամներ չունե՞ս, Շուշիկ, ցաւակցութեամբ  
հարցրեց Մարկօն:

— Ո՞չ մէկը. . . հաղիւ լույլի ձայնով շաբ-  
շաց Շուշիկը:

— Ուրեմն ի՞նչ պիտի անես:

Քիչ մտածելուց յետոյ նա պատասխա-  
նեց՝ շշառելով իսօքերը:

— Եթէ չը կարողանամ պատով ապրել,  
ես վերջ կը տամ իմ կրանքին. . . Ծովը հե-  
ռու չ' . . .

Մի վարկեան տիրեց լուսութիւն և որբերը  
տարեւցան իրանց մտապատկերներով:

Վերջապէս Քօչօն հարցրեց Շուշիկին.

— Խաչօխն ոչինչ չասեցի՞ր:

— Երբ ես փախայ տանից, պատասխա-  
նեց նա, նախ գնացի Խաչօխն յայտնելու  
այդ բոլորը, բայց՝ տարաբախտաբար ախո-  
ռի գուռը փակած գտայ. Խաչօն բացակայ  
էր: Եկայ պատապարեցի այս տեղ, սպասե-  
լով ձեզ, որովհետեւ ես գիտէի, որ գուք  
այստեղով պիտի անցնէք: Հիմայ, Մարկօ-  
ջան, թո՛ղ Քօչօն մնայ ինձ մօտ, իսկ գու-  
քնա՞ Խաչօխն յայտնիր այդ բոլորը ու հար-

ցրու նրան, թէ կարո՞ղ է արդեօք պահել  
ինձ ախոռի մէջ, մինչև մտածենք, մի եւք  
դանենք ինձ համար: Ա՛յս. . . գիտե՞մ. . . գի-  
տեմ, որ գուք էլ Խաչօն էլ՝ ինձպէս ան-  
բախտ ու մերժւած որբեր էք. . . բայց երա-  
նի՛ թէ ես էլ ձեզ պէս տղայ լինէի և ոչ  
սեօրա՞կ աղջիկ. . . Դուք չը գիտէք, գուք  
չ'ք կարող երեւակայել, թէ որքա՞ն գժւար  
է այսպիսի մի գժոխային քաղաքում անպաշտ-  
պան որբուհի լինելլ. . .

Առանց ըստէ կորցնելու Մարկօն վազեց,  
մտաւ մօտակայ թաղի խարիսուլ փողոց-  
ները և մէկից միւսն անցնելով՝ վերջա-  
պէս կանգնեց մի քարաշէն տան առ-  
ջև, որն իր շարքի մէջ միակ հաստատուն  
շինութիւնն էր և չէր նմանւում միւս խար-  
խուլ աներին: Այդ տան բակի ցանկապատի  
մէջ մի գաղտնի մուտք կար, որով Մարկօն  
ներս սողաց, գաղտագողի մօտեցաւ տան  
ներքնայարկի պատուհաններից մէկին, գի-  
տեց սենեակի ներսը ու շուտափոյթ հե-  
ռանալով՝ մի քանի քայլ արաւ ու մտաւ  
մօտակայ ախոռը:

### III

Գեղեցիկ կահաւորւած սենեակի մէջ՝  
մի չքեղ գահոքի վրայ՝ նատած էր տան  
ափկինը՝ տիկին Մաքրուհի Փիլոսեանը: Նա

նոր վերջացրեց «սիդարը» և անմիջապէս ծըշխախտ ու թուղթ վերցնելով մօտակայ սեղանի փրայի տուփից, սկսեց պատրաստել միւսը՝ անդադար փողոցին նայելով կիսաբաց պատուհանից Երեսում էր, որ նրա տարիները արդէն անցած են գէպի վեցերրորդ տասնեակը, բայց՝ իր հին սովորութեամբ՝ դեռ աշխատում էր արհեստական միջներով հրապուրիչ դարձնել իր գէմքը։ Սակայն նրա կնճռոս այտերի անբնական կարիքութիւնն ու մազերի տարօրինակ դոյնը բացարձակապէս մատնում էին կեղծիքը ու միանգամայն զզւելի դարձնում՝ այդ մեծաքիթ, հաստացիթունք երեսը։ Նա վառեց իր «սիդարը» և յանկարծ մեքենայաբար իր հայեացը դարձնելով իր սոկրտ մատների վրա՝ սկսեց շարունակաբար նայել իր շողշողուն, թանկաղին մատանիներին։ Այդ մատանիներից ամեն մէկը ունէր իր պատմութիւնը։ Դրանցից ամեն մէկի հետ կապւած էր մի գեղեցիկ որբուհու խորտակւած կեանքի նկարագիրը...»

Նրա մօտ նստած էր մօտաւորապէս քառասուն տարեկան մի գէր տղամարդ, ամառնային ճերմակ խալաթով, կարմիր ֆէսով ու սկէ ակնոցով։ Նա ծխում էր նարդիլէ և արագ արագ պարպում դարեջին շիշերը։ Նրա փափուկ ու յիմար դէմքը, անհավեմատ

մեծ փորը, վկայում էին, որ այդ մարդի բոլոր գոյսնթեան նպատակը միայն լաւ ուժ տեն էր և լաւ խմելը։ Իր տարօրինակ որկորի մոլութեանը բաւարարութիւն տալու համար նա համաձայնել էր իր ամբողջ կեանքը նվիրել այդ գարշելի կնոջը՝ ամուսնանաւով նրա հետ, և աջակցելով նրա սատանայական ձեռնարկութիւններին, այժմ ապրում էր նրա հաշով՝ նրա վաստակած արիւնոտ դրամով։ Ոչ աւելի քան ասաը տարի սրանից առաջ այդ մարդը մի քանի էշեր ունէր և մի ծառայ, որը աղբիւրներից չուր էր տանում շատերի համար։ Այդ ժամանակ, երբ գեռես գա ամուսնացած չէր ու դեռ մի խղճուկ մարդ էր, յայտնի էր Մարկոս՝ կամ ամենաշատը։ Մարկոս աղա անունով Բայց այսօր, երբ նա արդէն մտել էր հարուստ քաղաքացիների շարքը, բնականաբար, նրան անւանում էին Մարկոս էֆէնտի, կամ Փիլոսեան էֆէնտի և նա փառաւորում էր, երբ լսում էր այդ յարդւած տիտղոսը։ Պէտք է ասել, որ նա զուրկ չէր այն ճարպիկութիւնից, որը երեսում է Պօլսոյ բուլը ժողովուրդի մէջ։ Եւ այդ ճարպիկութեան նորին՝ առանց սէրի, առանց յարգանքի, նոյն խկ դարչաներով՝ ամուսնանալով մէկի հետ, նա զզուշութիւն էր ունեցել իր սիրար պահել մի ուրիշի համար։ Եւ այդպէս՝ դիշերները նա ապրում էր տիկին Մարգուհու հետ, իսկ ցողէները մի ուրիշ կեանքով։

Այս ընտանիքը իր շրջանում առհասարակ համարւած էր ունեորչ Շատերը ծածկաբար գիտէին, որ այդ տունը մի կատարեալ գործարան է, ուր պատրաստում են ու ծախւում կուսական անարատ մարմիններ...

Սենեակի պատկերազարդ պատերից մէկի վրայ՝ ոսկէզօծ շրջանակի մէջ՝ հաստատւած էր Յիսուսի փշազարդ գլուխը, որից միայն երեսում էր, որ դժանք քրիստոնեայ են թէն հայ էին դժանք, բայց խօսում էին յատկապէս տաճկերէն:

Եւ այդ լեզով հարցրեց տիկինը ամուսնուն:

— Դու այդպէս անտարբե՞ր պիտի մնաս և թողնես, որ աղջիկը կորչի՞...

— Ի՞նչ անեմ, ի՞նչ . . . անբաւականութեամբ բացականչեց ամուսինը:

— Հինգ տարի պահել պաշտել եմ նըրան, ասեց տիկինը, մեծացրել եմ, որ նա գնայ այս գիշեր առաջին պատահածի գիրկն ընկնի և իր կուսութիւնը նուիրի տիսնարի մէկին. Դու չե՞ս ցաւում, չե՞ս ափսոսում, որ այս երեկոյ ես ստիպւած եղայ այնքան ոսկիները վերադարձնել...

— Գնա՞մ, գնա՞մ . . . մըթմըթաց ամուսինը, հանեց «խալաթթը», հագաւ «բէդինկոտը», վերցրեց ձեռափայտը և ըմպելիքների աղդեռութեանտակ՝ օրօրւելով՝ դուրս ելաւ փողոցը:

IV.

Նուշիկն ու Քօչօն՝ կողկողքի՝ լուռ նըրատած էին նոճիների տակ, մի գերեզմանաքարի վրայ, երբ Մարկօն վերադարձաւ մի նորատի գեղջուկի հետ արին անւանում էին Խաչօվ Վերջինս տամնելից տարեկան՝ հսկայական կաղմածքով մի տղայ էր: Նրա բարձրը հասակը, լայն թիկունքը, չկոտ բազուկները, խոշոր ձեռքերը վկայում էին, որ նա ունի ոյժի մի ահազին պաշար: Նրա համակրեկի, մաքուր հայկական դէմքից արտայայտում էր թէ՛ լրջութիւն, թէ՛ կամքի ոյժ և թէ՛ մեղամաղձոտ տիսրութիւն: Սակայն նա խուլ էր ու աչքի մէկը կոյր: Գլխին ուներ մի հին ֆէս, հագին՝ եւրոպական կիսամաշ հանդերձի մի տարօրինակ ժողովածու, իսկ ձեռքին մի հաստատուն մահակ:

Երբոր նուշիկը նրան աեսաւ, վեր թռաւ, կանգնեց ու առաջ գնաց նրան հանդիպելու:

Խաչօն մոերմաբար ողջունեց նրան, հըսկայաբար արձանացաւ նրա առջեւ ու քաղցրութեամբ ասեց:

— Մէ՛ վախենալ, ես չեմ թողնիլ, որ քո գլուխցը մի մաղ պակեն:

Նուշիկը մօտեցաւ, երկու ձեռքերով բռնեց Խաչօի ձեռքը, մոերմաբար սեղմեց ու իր արտասաւալի աչքերով նրա միակ աչքին նայելով՝

կարողացաւ առանց խօսքերի պատայայտել իր չնորհակալութեան զգացմունքը:

Այնուհետեւ Խաչօն, Մարկօն և Քօջօն մուժ ու խարխուլ փողոցներով նուշիկին տարան ու գաղտագողի մոցրին Մարկոս էֆենտիի տան բակը և յետայ ախոռը, որի մէջ բնակւում էին այդ երեք տղաները:

Ախոռի մէջ կապած էր մի ճերմակ էշ, որը գլուխը քաշ ձգած՝ խոտ էր ուստամ մասրից էշի երկու կողմից՝ պատերի մօտ երեսում էին երկու խոտակոյուր ամեն մէկի վրա մէկ մէկ հնամաշ վերմակ՝ Խաչօն և իր ընկերների անկողիներն էին այդ:

Ախոռը մանելուն պէս՝ Խաչօն մի փոքրիկ գուռ բացեց ու մտաւ յարդանոցը, ուր փափուկ խոտերից մի աեղ պատրաստեց և մի մաքուր շալ հանելով իր հանդերձեղենի կապոցից, տւաւ նուշիկին ու ցոյց տւաւ, որ գնայ այնտեղ հանդստանայ: Այնուհետեւ նա հանեց իր քառիկից մի կտոր հաց ու պանիր և բաժանեց բոլորին: Մարկօն ու Քօջօն մեծ ախորժակով սկսեցին ուտել, որէվհետեւ այդ երեկոյ ոչինչ չէին կերել, բայց նուշիկը հրաժարւեց ուտելուց և չնորհակալութիւն յայտնելով մտաւ յարդանոցը:

Խաչօն չը մոռացաւ ցոյց տալ նուշիկին յարդանոցի դռան ներսի փականիքը և պատշիկից՝ յամենայն դէպա՝ ներսից փակել:

Նիկը կրկին չնորհակալութիւն յայտնեց ու բարի դիշեր ցանկանալով՝ անմիջապէս աշուանձնացաւ ու ընկաւ մի շարք տիտր մըտածմունկների մէջ: Ամեն անդամ, երբ յուսահատութիւնը գալիս էր և պաշարումնբան, յանկարծ հանդիսանում էր նրա առջև Խաչօնի պատկերը և նորից սիրտ էր առնում ու թոյլ տալիս իրան կարծել, որ գեռ բոլորովին կորած չէր ինքը, ենթադրելով թէ այժմ ապաւինած է մի անառիկ բերդի: Եւ Խաչօն աւելի ու աւելի մեծանում էր նրա աչքում ու սիրելի գառնում:

Նուշիկին տեղաւորելուց յետոյ՝ Խաչօն խկոյն փակեց ախոռի գուռը, խոտ ձգեց էշին ու գնաց իր խոտակոյտի վրայ քնելու: Բայց նախասպէս պատւիրեց իր ընկերներին շուտով հանդցնել ճրագը ու քնել, որպէսզի ախոռի մէջի անժամանակ լցոր կառկածանքի պատճառ չի գառնայ էֆէնովի համար:

Լուսիթիւնը տիրեց: Երկար ժամանակ լլսում էր միայն ճերմակ էշի ատամների տակ ջարդւող խոտի զըրազլուցոցը:

---

Արդէն բաւականին ուշ էր, բայց Խաչօն չէր կարողանում քնել: Իրան մոռացած՝ նա մոռածում էր թէ այդ երկու տարաբախտ որբերի վրա, որոնց սիրել էր՝ իբրև հարազար եղբայրներ, և թէ նուշիկի, որին նոյն-

պէս պաշտում էր՝ իբրև. քոյր և դուցէ առաւ-  
մել. . . Շուշիկին. . . այն քաղցրիկ, հեղիկ,  
բարի և աղնիւ Շուշիկի, որը միակ արարածն  
էր աշխարհի մէջ՝ որ խղճում էր Խաչօխն,  
ցաւում նրա համար, հոգում նրա պակասու,  
թիւնները, կարում, կարկատում նրա մաշած  
հանդերձները, ըանում նրա աղքատիկ ճեր-  
մակեղէնը և շատ անդամ իր ճեղքերով դուր-  
պաներ գործում ու ընծայում նրան. . . Եւ  
այդ հեղաբարոյ, հրեշտականման որբուհին,  
որին անսահման սիրում էր Խաչօն մի ան-  
յօյս սիրով ու ամբողջ երջանկութիւն գլու-  
նում, երբ օրւայ ընթացքում կարողանումէր  
գոնէ հեռւից նրա սուերը տեսնել, այս գի-  
շեր քնած էր այդքան մօտիկ՝ իր հովանաւու-  
րութեան տակ. . . Հէնց այդ էր գլխաւոք  
պատճառը, որ Խաչօն դիտմամբ աշխատում  
էր չըքնել, որովհետեւ դիտէր, որ մի որ և է  
արկածի գէտքում, եթէ իր մօտ նոյնիսկ  
թնդանօթներ պարպէին, ոչնչչէր կարողլլը-  
սել և չէր արթնանալ, որ կարողացած լինէր  
պաշտպանել քաղցրիկ Շուշիկին ու կատարած  
լինէր իր բարոյական պարտաւորութիւնը. . .  
Այդ լուրջ, պաշտպանողական, պատասխանա-  
տու գրութեան մէջ՝ իր բոլոր էութեամբ  
լարած՝ իր միակ աշքով նա անմարթ նա-  
յում էր ախտի գոանը, որպէս զի ոչ ոք  
մտնէր ու խանդարէր իր պաշտեիկ Շուշիկի  
անդորր քունը. . .

Կամաց կամաց եկան ու պաշտեցին նրան  
մի շարք մտապատճերներ։ Եւ յանկարծ նրա  
աչքի առջև ներկայացաւ իր հայրենի գիւղը՝  
Փոքր Ասիայի պահնչելի վայրերից մէկումէ  
թւում էր թէ նա պարզապէս տեսնում էր  
այն ծանօթ շավողը, որը դրացիների խրճիթ-  
ների մօտով տանում էր գէտի իր հայրական  
տունը։ Ահա և իրանց բակը։ Ոչինչ չէր փոխ-  
ւած. նոյն քարաշէն, փոքրիկ չինութիւնը,  
նոյն հինաւուրց կորացած ուռենու մօտ,  
որի տակից արտահոսում էր մի աղքիւր ու  
կարկաչահոս առուի պէս ընթանում գէտիկ  
մօտակայ խոր ձորը։ Բակի մէջ՝ գոմի առջև  
մայրիկը կով էր կիթում, հայրիկը նոր էր  
վերադաշել ջրաղացից և իր գեղեցիկ ձիու  
մէջը վերցնում էր ալիւրի հակերը, մեծ  
քոյլը կուտ էր տակիս հաւերին, իսկ միւսը՝  
սակուն ուսին վերադառնում էր աղքիւրից,  
եղացըները խոտ էին հանում գէտից իրանց  
անսառունների համար, իսկ ինքը՝ Խաչօն՝ կամ  
վազում էր հորթի կապը քաշում, որ կովին  
ծծէր և մայրիկին խանդարէր, կամ հայ-  
ը չափութիւնն էր ժաղովում ու պահում, կամ  
խոտ էր վերցնում և իր սիրելի հորթերին  
ձգում։ Եւ ծնողները գոհութեամբ գովում  
էին նրան՝ ասելով՝ «ապրի մեր փոքրիկ Խա-  
չօն, այս օր նա ամենից շատ աշխատեց»...  
Յետոյ մթնում էր, ճրագ էին վառում օդայի

մէջ և օշախի մօտ շարքով նստում ընթրելու... Ա՛խ... ի՞նչ լաւ կերակուրներ էր պատրաստում մայրիկը... Իի ու իի ուտելուց յետոյ՝ նա ուրախ ուրախ խաղում էր իր քոյրերի և եղբայրների հետ, լսում էր նրանցից գեղեցիկ, հետաքրքիր «հեքեմթներ» և այնուհետեւ քնում էր փափուկ անկողնի մէջ դլուխը դրած սիրելի մայրիկի կռան վրայ... Առաւտօտ էր լուսանում, նա արթնանում էր, հագնուում լայտօտմ; սամսորում և մայրիկը՝ կերակրելով նրան՝ արձակում էր, որ գնար իր մանկահասակ ընկերների հետ խաղալու։ Ու ամբողջ օրը նա անցնում էր մօտակայ դաշտերի ծաղիկների մէջ՝ մանկական խաղերին նւիրւած... Ա՛խ... ի՞նչ բերկրախի օրեր էին այդ և ի՞նչ ուրախութիւն... Ահա՝ ներկայանում է նրա առջև մի ամսոնային օր։ Գիւղացիները՝ արխաջան մեղսների պէս՝ աշխատում էին ամեն տեղ։ Արտերի մէջ հնձում էին հնձուրները, ճանապարհների վրայ երթեւկում էին խուրծ կրտզները, կալերում կալում էին, մօտակայ անսառից լսում էր գիւղացու տապարի ձայնը, իսկ լեռնային արօտատեղիներից հովտական սրնգի քաղցր մեղեղին... Կեանքը եռում էր ամեն տեղ... Բայց յանկարծ գիւղը շրջապատում է աւաղակների խումբերով, սկսում է մի սոսկախի ջարդ, մի ահեղ կոտորած և մի ակնթարթում լեռներն

ու գաշտերը ներկւում են արխանով... Գիւղը թալաննում է, այրուում, քանդուում՝ ու աւերակ գառննում... Եւ նա յիշեց այն անիմենով, երբ գառնագին արտառելով, նա անցաւ բաղմաթիւ գիւղիների մօտով, թողեց հայրենի դիւզի և մի խումբ որբացած մանուկների հետ արթեց քաղաք... Ահա՝ և որբանոցը։ Օտա՞ր գէմիքեր... օտա՞ր սրտեր... օտա՞ր փայփայանք... ցո՞ւրա ու սա՞ռը փազարչներ... Նա չէր կարողանում մօտենալ այդ անձանօթ գէմիքերին, չէր կարողանում ընտելմանալ մտերմանալ ու մոռանալ իր անցեալը... Գիշերներն անգամ երազի մէջ նա լալով սրոնաւմ էր իր սիրելիներին... Եւ ահա մի օր որբանոցի բակի մէջ նա տեսնում է ջրերի ճերմակ էշը, ուրախացած վազում է, փաթաթում նրա վզին, համբուրում նրա գունչը և մի յարմար միջոցում փախչում որբանոցից ու գնում էշի ետեից։ Այս տեղ նա մկոեց իրան գատապարտել թէ ինչո՞ւ մի էշի պատճառով թողեց որբանոցը և անմտաբար ընկաւ Մարկոս էֆէնտի տունը, ուր իսրեցին նրան ու պահեցին շահագործելու համար և այսպէս սկացաւ իր կեանին ու փշացաւ իր բոլոր ապագան... «Երեխա՛յ էի»... կամացուկ շնչաց նա, «ի՞նչ էի հասկանում... Ես համողւած էի թէ գա մեր ճերմակ էշն է, մի կենդանի, որ աչքիս առջև ապրել մեծացել էր

մեր գուանը... մի կենդանի, որի հետ կապւած էին իւր մանկական կեանքի ուրախ օրերը... Հայր, մայր, քոյրեր և եղբայլներ կորցրած, լարվ ասլլում էի անցեալիս յիշոլութիւններով երբ յանկարծ տեսայ այդ կենդանուն և կարծես գտայ մեր ընտանիքի անդամներից մէկը, որ աւելի մօտիկ էր իմ սրտին՝ քան ամբողջ աշխարհը... Գանելով նրան, ես գունութեամբ զգում էի, որ էլ մենակ չեմ աշխարհում... որ աշխարհի մէջ դեռ մնում է ինձ համար մի արարած. որին կարաղ էի մնանալ աներկիւղ և մտերմաբար, որի՞նեան նա օտար չէր ինձ համար... Ահա՛ թէ ինչու ես թողեցի ողբանացը և գերադասեցի՝ շարչաբւել... տանիջւել... ախոռի մէջ ապրել նրա հետ միասին»...

Յետոյ եկան ու շարան շարան կանդնեցին նրա առջև այն բոլոր թշւառութեան օրերը, որ անցրել էր Մարկոս էֆէնափի ախոռի մէջ՝ ամբողջ տասը տարւայ ընթացքում։ Այդ տեղ էր կորցրել նա իր աչքի մէկը ու զրկւել լսոլութիւնից... Թւում էր թէ դեռ հիւանդ, անխնամ, մոռայւած՝ ընկած էր նոյն խոտակոյափ վրայ, ուր այս օր պառկած էր և կարծես գեռ ցաւի, տենդի մէջ տանջւելով՝ բերանը ցամաքած՝ «ջո՞ւր» էր խնդրում և ջուր տւող չը կար... Այդ դառնագին օրերից մէկն էր, երբ նուշիկը դաղ-

տագողի այցելեց նրան, հարցրեց նրա առողջութիւնից, շիտկեց նրա բարձը, կերակրեց, ջուր տւաւ նրան, մի քանի չերմագին խոսքերով սիրա տւաւ, քաջալերեց նրան և խոստացաւ ամեն օր գալ այցելութեան, միայն թէ տիկինը և էֆէնափին չիմանային այդ... Նա առողջացաւ և նուշիկը եղաւ նրա միակ բժիշկը, նուշիկը, որի պատճառով Խաչոն շարտանակում էր գարձեալ կապւած մնալ այդ տաելի տան հետ և լուկ տանել նոյն չարչաբայից... Վերջապէս նա նորից տեսաւ իր ներկան։ Իրանից մի քանի քայլ հեռաւուրութեան վրայ քնած էին իր որբ ընկերները, որոնք պատահմամբ եկած՝ պատապարւած էին իր թեհերի տակ։ Արդէն երկու տարի էր, որ այդ մանկահասակ եղբայրները՝ ամառ, ձմեռ, անձրեսի ու ձիւնի տակ թափառելով՝ լուցկիներ էին ծախում, որ բնակարանի վարձ տան և մի կտոր հաց ունենան ուտելու և ապրելու համար... Ամեն անդամ, երբ պատահում էր, որ այդ որբիկները չէին կարողանում վճարել ախոռի վարձը, էֆէնափին կամ անսղորմաբար ծեծում էր նրանց, կամ ցոյց տալիս փողոցը... Այդ գէսպերից մէկն էր, որ ծեծի ժամանակ Խաչօն հասաւ իր ընկերներին պաշտպանելու և Մարկոս էֆէնափի ձեռափայտի հարւածից կորցրեց իր մի աչքի լըյմ ու ծանր հիւանդանելով՝ զրկւեց

լսողութիւնից... Միւս կողմից նա յիշեց Շուշիկին, մի գեղեցիկ, վայելքակազմ որբուհու՝ արդէն հաստնացած՝ կոկոն տարիներում; որին բախտը բերել ձգել էր մի անամօթ ընտանիքի մէջ՝ անրարոյականութեան զո՞ն լինելու համար... Եւ այս օր՝ երբ իր ինաւատարները՝ ուկիների վայրից մոլորւած՝ կուրացած՝ ուզում էին անառակութեան ցեխի մէջ զլորել նրան և անդամաբար խորտակել նրա ամբողջ կրանքը, նա փախել էր տանից և չը հաւատալով քաղաքացիներից ոչ մէկին, եկել էր պաշտպանութիւն որոնել իր բախտակից որբերի շրջանում... Եւ Խաչօի առջե իր ըմբռնողութեանը մատչելի գծերով ներկայացաւ ընդհանուր մերժւած որբերի աշխարհը ու հետաշետէ եկան ու շրջապատեցին նրան հարիւրաւոր կիսամերկ, ցնցոտիներով փաթաթւած, գունատ, նիհար, կմախք դարձած երեխաներ և փառցի ցնիսի մէջ ընկած, անարգւած որբուհիներ, որոնք՝ սարափահանը ձեռքերնին կարկառած՝ պաշտպանութիւն էին ինդրում յուսահատ... Այդ մերժւած որբերն էին, որ մարդկութեան խնամքից զրկւած, ազքից ընկած, մոռացւած, դատապարտւած էին հսկայական մայրաքազիքի մութ, մռայլ և ճահճոտ փոսերի մէջ տանել թունառուած կեանքի առապանքը, չարչարւել տանջւել բռնաբարւել և տարի-

ների ընթացքում հարիւրնելի՝ կորչել ու անցայտանալ յաւկութեադր յին սարսուառվ բռնւած՝ մի սոսկէր ը մով նա հարցըց ինքն իրան: «Ովքն խո այս որբերը. ի՞նչու համար են բերւած այս տեղ... ո՞ւր են դրանց ծնողները... ո՞վ խորտակեց գրանց կեանքը... ի՞նչ էր գրանց հանցանքը... գրանց մե՞զը»... Եւ նա յիշեց այն մանկահասակ աղջիկներին ու տղաներին որ մայրերից բաժանած գառնուկների պէս մշաւելով՝ իր հետ միասին բերում էին մարդի գեր տաք արիւնատ սպանգանոցը... Վշի գառնութիւնը յանկարծ մուսի պէս ելաւ նրա քթից, կոկորդը սեղմեց և նա սկսեց փոփոխով լու ու սպանալ... կարծես նա զգում էր, որ իր ամբողջ էութեան մէջ զգում էր մերժւած որբերի այն իրաւոջի մարմնացել էր մերժւած որբերի այն իրաւոջի բողոքը, որ այս օր անմիջապէս պիտի պայշտուած էր ու խաղաղաներ ներկայ հասարակութեան վայրենի բարբերն ու ապականւած մարդկութեան անիրաւութիւնը...

Սյդ գրութեան մէջ էր Խաչօն, երբ մի ուժգին հարւածից յանկարծ ախոռի գուռը բացւեց և Մարկոս էֆէնտին ներս մտաւ լապաերը ձեռքին:

Խաչօն քնած ձեացաւ:

Էֆէնտին մօտեցաւ Մարկօն ու Քօչօին, լապաերը գրաւ դարակի վրայ, այս կողմ կողմ նայեց, վերցրեց մուսի մօտից մի այն կողմ նայեց,

լողովթիւնից... անով մի պինդ հարւած շիկն, մի գերկ երեխաներին, արթնացրեց արտէն մուր է նուշիլը, հարցրեց էֆէնտին Քօչօին:

— Ես ի՞նչ գիտեմ ո՞ւր է... պատասխանեի Քօչօն՝ դեռ ցաւից մարմարելով ու շփելով իր մարմնի զարնւած տեղերը:

— Նրան աեսել են քեզ հետ միասին գերեզմանատան մէջ նոճիների տակ... պընդեց էֆէնտին:

Քոչօն ոչինչ չը պատասխանեց:

— Պապանձե՞լ ես... գոռաց էֆէնտին: Պատասխանի՞ր, եթէ ո՛չ, կը պանեմ քեզ... մուր է աղջիկը...

— Զը գիտե՞մ... պատասխանեց Քօչօն: Եւ էֆէնտին սկսեց անողորմաբար ծեծել նրան:

— Ինչո՞ւ ծեծում էք եղբօրս... արտասւայի աշքերով բողոքեց Մարկօն՝ պաշտպանելով իր եղբօրը և իր մարմնի վրայ ընդունելով թուկի հարւածները: Սա ի՞նչ գիտէ, ո՞ւր է նուշիկը...

— Օձի ձադգ՛ը... կատաղած սպառնաց էֆէնտին: Այս գիշե՞ր, այս գիշե՞ր պիտի ջախչախեմ ձեր գլուխները... Եւ զայրութեան վրփուրը բերանին դարձաւ ու գնաց դէպի յարդանոցի դուռը:

Մարկօն՝ օդուելով այդ 75  
Խաչօի մօտ, շարժեց նրան, ենթադր:

նա քնած էր և իբրև խուլ մարդ՝ չէր լութէ ի՞նչ էր կատարւում այդ տեղէ իսկ Խաչօն՝ լարւած, ջղայնացած, զայրութից դուռմ էր սասափիկ և իր հայեցքը սեեռած էֆէնտիի վրայ, հետախուզում էր նրա գործողութեան ընթացքը: Իր ձեռքի մի շարժումով նա հրեց Մարկօն, հասկացրեց նրան, որ ինքը տեսնում է բոլորը և պատսիրեց հեռանալ ու չը խանդարել իրան:

Իսկ էֆէնտին՝ գիտելով յարդանոցի դուռը, տեսաւ, որ ներսից վակ է, ուստի քնականաբար՝ նա համոզւեց, որ ներսը մարդ կար պահւած և այդ մարդը անտարակոյս նուշիկը պիտի լինէր: Մի քայլ յետ գառնալով, իր խոչը մարմնի բոլոր ոյժով նա աքացեց դըռանը, դուռը բացւեց և ներսից լուեց նուշիկի յուսահատական ճիշը...

Նոյն վայրկենին Խաչօն դուրս թռաւ իր անկողնից, վերցրեց իր մահակը ու համնելով էֆէնտիի յետեկից, բռնեց նրա թերը, յետ քաշեց նրան, ձգւած՝ կանգնեց նրա առջև, և առանց խօսք արտասանելով՝ ցոյց տւառ նրան ախոռի դուռը:

— Դո՞ւ, չ' մե... գոռաց էֆէնտին, ապո՞ւշ ... դու համարձարկուում ես ինձ դուրս ձգել իմ տաճմից...

լողութիւնիու... ատամների արանքով շնչաց  
շիկն, մի կանգնեց յարդանոցի դռան առջև  
արք էնտիփի զայրոյթը հասաւ իր գագաթ-  
ու կէտին: նա վրայ թռաւ, վերցրեց մօտա-  
կայ անկիւնից մի մեծ փայտ ու կատաղած  
յարձակւեց Խաչօխ վրայ:

Կոին սկսւեց և Խաչօխ մի ուժգին հար-  
ւածից Մարկոս էֆէնտին գլուխեց ու ընկաւ  
շնչառպառ:

Մի վայրկեան տիրեց լուսութիւն:

Խաչօն մի քայլ առաջ դնաց, կանգնեց,  
խոր նայեց էֆէնտիի զոհատ դէմքին և  
սարսափի ցնցումավ զգաց, որ հակառակ իր  
ցանկութեան՝ ինքը մարդասպան գարձաւ ...  
իր արիւնոտ մահակը նա ձգեց դիսկի վրայ,  
երեսը գարձրեց դէպի ախոռի դուռը և մի  
արտասովոր ձայնավ շրջնջաց.

«Սպանեցի»...

«Սպանեցի»... կրկնեց նա և դուրս  
թռչելով անյայտացաւ դիշերւայ ու կեանքի  
մթութեան մէջ...




ամբ...

ՀՀ Ազգային գրադարան



NL0358001



41678